Ի՞նչ ժամկետում է համայնքի ղեկավարը հրապարակում հանրային բաց լսումների կամ քննարկումների հրավերը.

A. **Հանրային բաց լսումների կամ քննարկումների իրականացման օրվանից առնվազն 15 օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է հանրային բաց լսումների կամ քննարկումների հրավեր, որն իրականացվում է համայնքի ՏԻՄ-երի նստավայրում և բնակիչների համար հասանելի այլ վայրերում դա փակցնելու, ինչպես նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում տեղադրելու միջոցով.**
B. Հանրային բաց լսումների կամ քննարկումների իրականացման օրվանից առնվազն 7 օր առաջ համայնքի ղեկավարը համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարակում է հանրային բաց լսումների կամ քննարկումների հրավեր.
C. Հանրային բաց լսումների կամ քննարկումների իրականացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է հանրային բաց լսումների կամ քննարկումների հրավեր, որն իրականացվում է համայնքի ՏԻՄ-երի նստավայրում և բնակիչների համար հասանելի այլ վայրերում դա փակցնելու, ինչպես նաև համայնքի պաշտոնական համացանցային կայքում տեղադրելու միջոցով:

Ե՞րբ է հրապարակվում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

A. Ավագանու հաստատելուց հետո 15-օրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.
B. **Ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.**
C. Ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում:

Ո՞ր մարմինն է հաստատում համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը.

A. **համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի ավագանին.**
B. համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարը.
C. տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված մեթոդական ցուցումների համաձայն՝ համայնքի ավագանին:

Համայնքի ղեկավարը մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ներկայացնում ավագանու հաստատմանը՝

A. ընտրվելուց հետո հինգ ամսվա ընթացքում.
B. **իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո չորս ամսվա ընթացքում.**
C. իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո եռամսյա ժամկետում:

Ի՞նչ է տեղական տուրքը.

A. օրենքով սահմանված գումար է, որն անհրաժեշտ է ՏԻՄ-երի կողմից իրենց վերապահված լիազորություններն իրականացնելու համար.
B. **ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի հիման վրա ավագանու սահմանած գանձույթ է.**
C. պետական տուրքի այն տեսակն է, որն ուղղվում է համայնքի բյուջե՝ ՏԻՄ-երի լիազորությունների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով.

Ե՞րբ է համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում տեղական տուրքերի դրույքաչափերը.

A. յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում.
B. համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ.
C. համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց հետո՝ ըստ անհրաժեշտության:

Ե՞րբ կարող են փոփոխվել օրացուցային տարվա համար սահմանված տեղական վճարների դրույքաչափերը.

A. յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում.
B. փոփոխության չեն կարող ենթարկվել.
C. համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց հետո՝ ըստ անհրաժեշտության:

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը.

A. համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու համաձայնությամբ.
B. համապատասխան մարզպետը՝ համայնքի ավագանու առաջարկությամբ.
C. համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ:

Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

A. համայնքի ավագանին.
B. պետական լիազորված մարմինը.
C. համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու համաձայնությամբ:

Նշվածներից ո՞ր մարմինն է օրենքով սահմանված կարգով ապահովում համայնքի բյուջեի կատարումը.

A. համայնքի ավագանին.
B. համապատասխան գանձապետական ստորաբաժանումը.
C. համայնքի ղեկավարը: